

ԱԶԱՏ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԵՐԿԻ ՄԻ ՔԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մանուկ Աբեղյանը վկայում է. «(Խորենացու մատյանի մասին) բուն գրական ուսումնասիրությունն չկա»¹: Աբեղյանի մահվանից անցել է մի քանի տասնամյակ, բայց շատ բան չի փոխվել: Խորենացիագետների ջանքերի առյուծի բաժինը ուղղված է Խորենացու ժամանակին ու ժամանակագրությանը, զուտ բանասիրական և պատմագիտական խնդիրներին: Այս միակողմանիությունը պատմաճոր գործի քննության մեջ անարգար է: Խորենացու երկը հայ խոսքի, մանավանդ պատմողական խոսքի հետաքրքրագույն հուշարձաններից է: Ներկա հոգվածում ես կանգրադատեմ Խորենացու «Պատմության» բուն գրական մի քանի խնդիրների, հատկապես նրա խոսքի առանձնահատկություններին:

Սկսեմ մի խնդրով, առանց որի ամբողջական և ճիշտ պատկերացում կազմել Խորենացու խոսքի մասին հնարավոր չէ: Արդյո՞ք Խորենացու աշխատությունը պատկանում է գեղարվեստական արձակի մարզին:

Դրականագիտության մեջ երբեմն լռելյայն, երբեմն բարձրաձայն, այս հարցին գրական պատասխան է տրվում²: Իմ կարծիքով, V դարի պատմագրությունը, ինչպես և ամբողջ հայ պատմագրությունը, գեղարվեստական արձակ չեն: Ներկա հոգվածում հնարավորություն չկա մանրամասնորեն խոսել մի քանի տեսական խնդիրների մասին՝ կապված արձակի գեղարվեստականությամբ հետ: Դրանց ես անգրադարձել եմ այլ հոգվածում³: Այստեղ համառոտ և սխեմատիկ շարադրեմ հիմնական գրույթները: Ես ելնում եմ այն ըմբռնումից, որ գեղարվեստական արձակը ծնվում է հեղինակային հնարանքի հետ: Քանի

¹ Մանուկ Աբեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, գիրք առաջին, Անթիլիաս – Լիբանան, 2004, էջ 263: Հետագա մեջբերումները՝ այս գրքից:

² Մայիս Ավդալբեգյանը իր *Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը* աշխատության մեջ Խորենացու մատյանը չի ֆննում V դարի այն պատմագիրների գործերի շարքում, որոնք ինքը դիտարկում է իբրև հայ գեղարվեստական արձակի սկզբնավորում: Բայց հետագայում *Հայ միջնադարյան գրականության ժանրերը* գրքում տպագրված հոդվածում նա Խորենացու երկն էլ է ֆննում իբրև գեղարվեստական արձակ: Երկու դեպքում էլ նրա հետ դժվար է համաձայնել և այն դեպքում, երբ նա Խորենացուն հետացնում է V դարի իր գրչակիցներից (գրքում), և այն դեպքում, երբ նրան էլ, մյուսների պես համարում է գեղարվեստական արձակի ներկայացուցիչ:

³ Ազատ Եղիազարյան, «Художественный вымысел», в сб. *Литература в меняющемся мире* (в печати).

դեռ հեղինակը չի գիտակցել իր իրավունքը ստեղծել, այսինքն, հնարել իր աշխարհը, մենք գործ ունենք արձակի այլ տեսակների, և ոչ թե գեղարվեստական արձակի հետ: Այն, ինչ ներկայացնում է *V* դարի պատմագիրը, մեր հայացքով ճշմարտություն չէ: Գա առասպել է, ճշգրիտ չէ և այլն, բայց դա՝ մեր հայացքով: Իրենք՝ հեղինակները, չունեին այդ գիտակցությունը:

Պատմագիրները համոզված էին, որ գրում են մաքուր ճշմարտությունը (այդ համոզմունքի արտահայտությունները հանդիպում են Ագաթանգեղոսի, Եղիշեի և ուրիշների գրքերում): Իհարկե, այդ «ճշմարտության» մեջ խառնված էին իրական փաստերը, ավանդությունները, բանահյուսությունը, գրական կանոնը: Բայց պատմագիրները գիտակցաբար ոչինչ չէին հնարում: Նրանք ամենաշատը կարող էին ծաղկեցնել իրենց պատմածը զանազան պատկերներով, խոսքի երանգավորումներով, որոնք, պետք է հատուկ շեշտել, շատ բազմազան են *V* դարի պատմագրության մեջ: Անգամ Խորենացին, որի «Պատմությունը» ամենից մոտ է գիտականության մասին մեր պատկերացումներին, հաճույքով զարդարում է իր խոսքը տպավորիչ պատկերներով, համեմատություններով, մակդիրներով:

Բայց *V* դ. գրքերը նաև «մաքուր» պատմագրություն չեն, մաքուր գիտական աշխատություններ չեն: *V* դարում հայ մատենագրության մեջ այդպիսի բաժանում չկար ոչ տեսական մակարդակով, ոչ էլ գործնականում: Պատմագրության մեջ տարբեր հատկանիշներ կազմում են մի ամբողջություն, որը կարելի է անվանել հենց պատմագրական արձակ:

Խորենացու գրքում գիտականության հատկանիշները, *V* դ. մնացած բոլոր պատմագիրների համեմատությամբ, ամենից ավելի են աչքի ընկնում: Նրա առաջին հատկանիշը, որ նրան առանձնացնում է իր գրչակիցների գործերի ֆոնին, նրա խոսքի քննականությունն է: Դա իսկապես գիտականության միտող խոսք է, սթափ, ամեն տեսակի շափազանցություններից (իր ըմբռնումով) խուսափող: *V* դարի պատմիչներից ամենից շատ նա է ձգտում հարազատ մնալ պատմության փաստերին: Ընթերցողն անընդհատ հանդիպում է նրա գատողություններին այն մասին, որ ուրիշների հաղորդած այսինչ կամ այնինչ փաստը իրեն արժանահավատ չի թվում, կամ, ուրիշ գեպքերում, հավաստիացումներ այն մասին, որ ինքը փնտրել և գտել է իսկական ճշմարտությունը, արժանահավատ փաստերը: Ահա թե ինչու է նա այդքան շատ դիմում կողմնակի աղբյուրների օգնությանը: Նրա օգտագործած աղբյուրների քանակությունը իր ժամանակի, մանավանդ նոր սկսվող հայ պատմագրության համար աննախագեպ է: Գաղիկ Սարգսյանը իր թարգմանության առաջաբանում տալիս է այդ աղբյուրների տպավորիչ պատկերը (առհասարակ այդ հոգվածը Խորենա-

ցու պատմագիտական սկզբունքների լավագույն վերլուծություններից է)⁴: Մեզ հետաքրքրում է, թե ինչպես են այդ սկզբունքները արտացոլվել նրա խոսքում՝ դառնալով ոճի հատկանիշ:

Կարելի է ձևակերպել այսպես՝ Խորենացին հենվում է ոչ թե հավատի, այլ տրամաբանության վրա, և սրանով նա շատ է տարբերվում V դարի մեր մյուս պատմիչներից: Սա, հարկավ, չի նշանակում, որ Խորենացին հավատացյալ քրիստոնյա չէր: Ինքն էլ է հենվում Աստվածաշնչի վրա, մեծ հարգանքով է խոսում Ս. Գրքի մասին: Բայց ես խոսում եմ նրա մտածելու եղանակի մասին, որում ամենակարևորը քննական մոտեցումն էր, տրամաբանությունը:

Նրա մտածողության այս կողմը լուսաբանելու համար ամենաշահեկան օրինակները, պատմական փաստերի քննությունից հետո, տալիս է նրա վերաբերմունքը Ս. Գրքի և կրոնական սյուժեների նկատմամբ:

Խորենացու քննող հայացքը տարածվում է մինչև կրոնական խնդիրները, առաջին հերթին՝ մինչև Աստվածաշուշ: Շատ հետաքրքրական է և բնորոշ նրա վերաբերմունքը քրիստոնեության հանդեպ: Երբ գործ ունենք Ազաթանդեղոսի և Եղիշեի հետ, այս դեպքում խնդիրն ավելի պարզ է. Ազաթանդեղոսը ոչ միայն հավատացյալ է, այլև աշխարհը տեսնում է մեկ լույսով՝ քրիստոնեական բարոյականության ու դոգմատի լույսով: Նրա աշխարհայացքը ձևավորված է այդ կաղապարով, մնացած տարրերը պատահական ու անկարևոր են: Եղիշեն հավատը կապում է ազգության հետ. բայց պատահական չէ, որ Ղևոնդը նրա մատչանում ավելի կարևոր դեմք է, քան Վարդանը (թեև մատչանը մեզ է հասել իբրև «Պատմություն Վարդանայ»): Եղիշեի աշխարհայացքի համար էլ կրոնականությունը շատ կարևոր է: Այնինչ Խորենացու դեպքում հավատի ազդեցությունը նրա մտածողության վրա նկատելիորեն ավելի քիչ է զգացվում: Չգայթակղվենք նրան քննադատական հայացք վերագրելով քրիստոնեության հանդեպ: Նա հավատացյալ է և քրիստոնեության ջատագով: Բայց նա Հայոց պատմության և դրա հետ կապված դեպքերի մասին խոսելիս հենվում է ոչ այնքան Սուրբ գրքի, որքան իր հետազոտությունների արդյունքների վրա: Հետաքրքրական է, որ մեր քրիստոնյա պատմագիրը քննական հայացք է նետում և Ս. Գրքին. «Եւ այս յայտնի է ամենեցուն, զի դժուարհաւաք և տաժանելի է որպէս զիւտ ժամանակացն ի սկզբանէ մինչև առ մեզ... Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զիւրան ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհեկեացն և իւրոց անարժան կարգելոց բանից» (Գիրք առաջին, Ե, էջ 17)⁵: Ուշադիր լինենք իմ բնագծած տողերին. հստակ լավում է Խորենացու անբավարարվածությունը, որ Սուրբ գիրքը ուշադրություն է դարձրել միայն իր

⁴ Տե՛ս **Мовсес Хоренаци**, *История Армении*, перевод с древнеармянского языка, Введение и примечания *Гагика Саркисяна*, Ер., Айастан, 1990, сс. X-XVII:

⁵ Պատմության էջերը նշվում են ըստ 1991 թ. երևանյան հրատարակության, որը կրկնում է Տփիսիսի (Թբիլիսիի) 1913 թ. ֆննական հրատարակությունը:

ազգին: Իսկ մնացածը ինքը՝ Խորենացին, գտել է տաժանելի աշխատանքով: Իսկ նախորդ գլխում Խորենացին տրամաբանության դիրքերից քննում է Ս. Գրքում ասվածը Ենոքի և Նոյի մասին և հանգում որոշակի եզրակացությունների: Նույն Ե գլխում Խորենացին հայտնում է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ չի գտել նահապետների մի քանի անուններ և դրանք լրացրել է «մի ուշիմ և ընթերցասեր ասորացու» ասածից: Այսինքն, այս դեպքում Աստվածաշունչը նրա համար աղբյուր է ուրիշ աղբյուրների շարքում:

Այլ դեպքերում Խորենացին հանգիստ պատմում է հեթանոսական աստվածների հանդեպ հայոց և այլ թագավորների պաշտամունքի մասին, որն է անհարգալից արտահայտություն չանելով այդ աստվածների մասին (օրինակ, Գիրք երկրորդ, ԺԳ): Այսինքն, նա հեթանոսությունը ընդունում է սոսկ իբրև պատմական փաստ: Իհարկե, երբ հասնում է Աբգար թագավորին, նրա նամակագրությանը, բաժանում է Աբգարի ջերմեռանդությունը: Երբ պատմում է քրիստոնեության ընդունման, իր ժամանակի իրադարձությունների մասին (երկրորդ գրքում), հանդես է բերում և կրոնական ջերմեռանդություն: Բայց չենք կարող չհիշել նրա ակնածանքը հունական առասպելների հանդեպ, առասպելներ, որոնք հազեցած էին հեթանոսությամբ: Հունաստանը «մայր կամ դայակ իմաստության» եղել է հենց հեթանոսության շրջանում: Մի այլ դեպքում Պատմահայրը հանդուրժողաբար է խոսում զրազաշտականության մասին (երբ պատմում է պարսից Արտաշիր թագավորի՝ Հայաստանում ծավալած դոժունեության մասին (Գիրք երկրորդ, ՀԷ): Այսինքն, Խորենացու պատմության մեջ քրիստոնեությունը անանցանելի սահմաններ չի դժում նրա հայացքին: Իր քրիստոնյա լինելը էականորեն չի ազդում նրա պատմագիտական հիմնագրովի (կոնցեպցիայի) վրա:

Զի ազդում և խոսքի վրա: Մեր հիշած բոլոր դեպքերում Խորենացու խոսքը հանգիստ է, հավասարակշռված, մեջբերումներ և հղումներ Աստվածաշնչին համարյա չկան, ի տարբերություն Ազաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու: Խոսում են ոչ թե կրոնական պաթոսն ու ջերմեռանդությունը, այլ քննությունն ու տրամաբանությունը:

Շատ կարևոր է, թե ինչպես է նա ներկայացնում իր հերոսների նահատակությունը: Մինչ V դարի (և հետագա դարերի) պատմիչները մանրամասն և ջերմեռանդորեն նկարագրում են վկաների մարտիրոսությունը, Խորենացին ընդամենը համառոտ տողերով ներկայացնում է փաստը: Նա խուսափում է սրբերի տառապանքն ու մահը և, ուրեմն, նրանց ցնծությունը զոհաբերության պահին նկարագրելուց: Սրան արժե ուշադրություն դարձնել, մանավանդ, որ նա բազմաթիվ անգամներ հիշում է Ազաթանգեղոսին, նկարագրում է նույն դեպքերը, ինչ Ազաթանգեղոսը, բայց խուսափելով տանջանքների ու մահվան նկարագրությունից: Ազաթանգեղոսը բազում էջեր է նվիրում Գրիգոր Լուսավորչի տանջանքներին ու այդ պահին նրա արտասանած խոսքերին: Խորենա-

ցին միայն մի անգամ է անցողակի հիշում Լուսավորչի ֆիզիկական շարժարանքները: Մյուս սրբերի մասին բավարարվում է միայն նրանց սպանվելն հիշելով և Ազաթանդեղոսին հղելով: Օրինակ, երկրորդ գրքում մի գլուխ կա «Յաղագս վկայութեան առաքելոցն մերոց» վերնագրով: Այստեղ Խորենացին կարճ և առանց զեղումների պատմում է Ազդեի մահվան մասին. «Եւ յդեաց առ Ազդէ, զի արասցե նմա խոյր բեհեզեայ անդուածով ոսկոյ, որպէս առաջագոյն առնէր հօրն նորա: Եւ պատասխանի ընկալաւ, թէ «ոչ արասցեն ձեռք իմ խոյր գազաթան անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանւոյ»: Եւ իսկոյն հրամաեաց միում ի զինակրացն՝ կտրել զոտս նորա սրով: Որոյ երթեալ, և տեսեալ զնա, զի նստէր յաթոռ վարդապետութեանն՝ էած սուսերաւ և ի բաց կտրեաց զսրունս նոցա, և նոյն ժամայն աւանդեաց զհոգին» (Գիրք երկրորդ, ԼԳ, էջ 158):

Խորենացու ոճն ու մտածողությունը ուսումնասիրելիս չի կարող հարց չառաջանալ՝ որտեղի՞ց են գալիս դրանց առանձնահատկությունները և, առաջին հերթին, քննականությունը: Ոչինչ դատարկ տեղում չի առաջանում: Իսկ V դ. առաջ հայ գրականություն չկար, և Խորենացին հայ հեղինակների վրա չէր կարող հենվել: Կար հայոց նախաքրիստոնեական հարուստ բանահյուսությունը: Որ Խորենացին գիտեր այդ բանահյուսությունը, երևում է իր իսկ գրքից, որի առաջին գլուխները հենվում են բանահյուսության վրա (բայց կարելի է արձանագրել, որ Խորենացու և բանահյուսության կապը լավ չի ուսումնասիրված):

Ինչ վերաբերում է նրա քննական-տրամաբանական ոճին, այստեղ նա կարող էր հենվել միայն անտիկ պատմագրության վրա:

Վաղուց արդեն ընդհանուր տեղի է դարձել հունական մշակույթի հանդեպ նրա վերաբերմունքը: Նրա հիացմունքն ու ակնածանքը հին հույների ստեղծածի նկատմամբ ընդգծվում է նրա գրքի բոլոր մասերում: Նրա հայտնի նախադասությունը՝ «Զբոլոր իսկ զՅոյնս ոչ դանդաղիմ մայր կամ դայակ ասել իմաստից» (Գիրք առաջին, Բ, էջ 9) նրա վերաբերմունքի ամենաճշգրիտ արտահայտություններից մեկն է: Բուն տեքստում բազմաթիվ վկայություններ կան այն մասին, որ Խորենացին առնվազն լավ ծանոթ է հունական դպրությունը: Նա հիշում է ոչ միայն Հոմերոսին, այլև հույն պատմիչներին՝ սկսած մ. թ. ա. V դարից՝ Հերոդոտոս և ուրիշներ: Պատահական չէ Խորենացու վերապահությունը, որ թեև իր տեղեկությունները սկզբնապես եղել են ասորական և այլ աղբյուրներում, ինքը գերադասել է դրանք բերել հունական աղբյուրներից: Ընդհանրապես, հունական հետքը Խորենացու գրքում արժանի է առանձին քննության: Հայ պատմիչներից ուրիշ ոչ ոք այսքան կապված չի եղել հունական մշակույթի հետ (չմոռանանք նաև նրա անվերապահ-մերժողական վերաբերմունքը պարսկական առասպելների և նույնքան անվերապահ հիացմունքը հունականների հանդեպ):

Պատմահոր այս ակնածանքը հունական դպրության հանդեպ իր խոր հետքն է թողել նաև նրա սեփական մտածողության մեջ: Հին հույների ռացիոնալիզմը, հավատը բանականության հանդեպ դարձել է հորենացու մտածողության գլխավոր կողմերից մեկը: Այն, ինչ քիչ առաջ հիշվեց իբրև հորենացու մտածողության առանձնահատկություններից մեկը (ոչ թե հավատ, այլ տրամաբանություն, սթափ քննություն), գալիս է, անկասկած, հունական մտածողությունից: Հույներն հավատում էին իրենց աստվածներին, բայց դա միանգամայն տարբեր էր իրենց աստծու հանդեպ քրիստոնյաների վերաբերմունքից, որն արտացոլվեց նաև պատմագրության մեջ: Տրամաբանական կամ, որ այս դեպքում նույնն է, փիլիսոփայական մտածողությունը հին հույների հոգևոր կյանքի ամենաէական գծերից մեկն էր: Այնինչ քրիստոնեության ազդեցության ոլորտում գտնվող մտածողների համար գլխավորը անկասկածելի հավատն էր միակ Աստծու և նրա նախանշած ուղու հանդեպ:

Այնինչ մենք տեսանք, որ հորենացու գրքում հավատը իբրև մտածողության սկզբունք շատ կարևոր տեղ չի գրավում: Այն, ինչ Հերոդոտոսը, Թուկիդիդեսը, Քսենոփոնը արել էին մ. թ. ա. V դարում, անում էր հայկական իրականության մեջ հորենացին նրանցից հազար տարի հետո: Այս կետում արժե ուշադրություն դարձնել հորենացու Պատմության և Թուկիդիդեսի գրքի միջև առկա մի ընդհանրություն: V դարի հայ պատմագիրներից հորենացին միակն է, որ տեսական գատողություններ է անում պատմագրության մասին: Նրա այս գատողությունները հիշեցնում են Թուկիդիդեսի պատմության սկիզբը: Թուկիդիդեսը այստեղ խոսում է Հունաստանի պատմության հին շրջանի, Հունաստանի աշխարհագրության, զանազան անցքերի մասին ստացած տեղեկությունների մասին: Թուկիդիդեսը հատուկ ուշադրություն է դարձնում իր՝ պատմագրի գրածի և բանաստեղծների և արձակագիրների գրածների տարբերությանը, ակնհայտ քամահրանքով վերաբերվում դրանց: Նա հավաստիացնում է, որ ինքը կամ տեսել է, կամ տարբեր աղբյուրներից ստուգել է փաստերը: հորենացու գրքում, իհարկե, այսպիսի հակադրություն չէր կարող լինել: V և նախորդ դարերի Հայաստանում չկային բանաստեղծներ և արձակագիրներ, որոնց նա հակադրվեր: Բայց էականը քննականության միտումն էր, և այս տեսակետից Թուկիդիդեսի դիրքը շատ հոգեհարազատ է նրան: Նա էլ խիստ քննադատաբար է մոտենում իր աղբյուրներին, առաջին հերթին՝ բանահյուսությանը:

Այս զուգահեռը շատ թերի կլինի և թյուրիմացությունների առիթ կարող է տալ, եթե չտեսնենք հորենացու մտածողության զուտ ազգային և անհատական գծերը, որոնք նրան տարբերում էին Հին Հունաստանի պատմագիրներից: Սկսենք նրանից, ինչ հորենացու մեջ ընդգծում էր նրա հայկականությունը: Այստեղ մենք բախվելու ենք նաև պատմական պայմանների, պատմության զարգացման տարբեր փուլերի հետ:

Մեր հիշած հույն պատմագիրները գործում էին հունական քաղաք-պետությունների մրցակցության միջնորդությամբ: Նրանց բոլորի մեջ կա այն զիտակցությունը, որ նրանք հելլեններ են՝ հույներ: Բայց դա, զարմանալիորեն (մեզ՝ հայերիս համար) կապ չունեն ազգային հայրենասիրության հետ: Այս ազգայինին պետք է շատ ուշադիր լինել: Նրանց հերոսները՝ Պերիկլեսը և մյուսները իրենց քաղաք-պետությունների հայրենասերներն են: Պերիկլեսը ամեն ինչ անում է Աթենքի և աթենացիների հաղթանակի համար, և սպարտացիները կամ լակեդեմոնցիները, որոնք նույն հույներն են, ճիշտ այնպիսի թշնամիներ են կամ հակառակորդներ, ինչ պարսիկները և մյուս բարբարոսները: Հաղթում են մեկը մյուսին, ավերում միմյանց հողերը, սպանում գերիներին կամ ստրկության վաճառում: Ահա այստեղ Խորենացին սկզբունքորեն տարբեր է նրանցից: Հունական դասական պատմագրությունից հետո անցած հազար տարում փոխվել են աշխարհընկալումները: Փոխվել է հայրենասիրության բնույթը: Եվ Հայաստանի պատմությունն է շատ տարբեր հույների պատմությունից: Խորենացին ոչ թե քաղաքի, որևէ վայրի, այլ մի երկրի և ժողովրդի ներկայացուցիչ է: Ահա այստեղ նրա խոսքի քննականությունը էականորեն լրացվում է զգացմունքայնությամբ: Խորենացին շատ զգացմունքային է, երբ խոսում է հայոց պետության, հայ հերոսների մասին: Ահա Խորենացու զգացմունքայնության ամենատպալորիչ (և ամենահուզիչ) արտահայտություններից մեկը. «Արգ՝ այժմ անցից ի թիւ մերոց արանց, մանաւանդ թե թագաւորաց, մինչև ցտէրութիւն Պարթևաց: Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպես բնիկք և իմոյ արեան առուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ դալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ, և յարգեացս ապրել վտանգիցս» (Գիրք առաջին, ԻԲ, 66): Սա բոլորովին այլ վերաբերմունք է սեփական ժողովրդի և նրա հայրենիքի հանդեպ: Արցան մասին հիշողությունը այստեղ հուշում է Խորենացու հայրենասիրության բնույթը՝ այս պատմիչը իրեն զգում է իբրև որոշակի ժողովրդի (և ոչ քաղաք-պետության, մարզի և այլն) ներկայացուցիչ: Այսպիսի հատվածներ՝ ուժեղ կամ թույլ զգացմունքայնությամբ, սփռված են Խորենացու ողջ պատմության մեջ:

Այստեղից էլ՝ Խորենացու մատյանի վերնագիրը արտահայտում է նրա աշխատության բուն էությունը: Համեմատության համար կարելի է հիշել, որ հին հույների (և հռոմեացիների) գրքերը վերնագրված են առանց երկրի կամ ժողովրդի նշման: Օրինակ, Հերոդոտոսի պատմությունը կոչվում է «Պատմություն ինն գրքից», Թուկիդիդեսինը՝ «Պելոպոննեսյան պատերազմի պատմություն», Քսենոփոնինը՝ «Անաբասիս» և այլն: Նրանց հոռվմեացի հետևորդի՝ Տակիտոսի գրքերը՝ «Աննալներ», «Պատմություն» և այլն: Հնարավոր է, որ Խորենացու (և V դարի մյուս հայ պատմիչների) գրքերի վերնագրերը փոխվել կամ խմբագրվել են: Բայց դրանց բովանդակությունը, մանավանդ Խորենացու

Պատմությունը, իսկապես հայոց պատմություններ են, գրված ոչ անկողմնակալ պատմիչի, այլ իր հայրենիքի ճակատագրով խորապես ապրող հայ մարդու ձեռքով: Առհասարակ, հայրենիքի գաղափարը (հայկական ըմբռնումով) էական չէ անտիկ պատմագրության համար, հատկանիշ, որը որևէ շափով չի պահանջում դրա արժեքը: Խոսքը միայն պատմագրության ազգային առանձնահատկությունների մասին է: Հերոգոտոսը իրեն կարող է թույլ տալ երկար և հանգամանորեն պատմել զանազան հերոսների ու գործիչների հետ կապված տարբեր դրվագներ, որոնք ինքնին շատ հետաքրքրական են, բայց ուղղակիորեն կապված չեն հույների պատմությանը, որովհետև նա իսկապես հույների պատմությունը չի գրում, այլ պատմությունը այն բոլոր երկրների ու ժողովուրդների, որոնց ինքը այս կամ այն կերպ ծանոթ է (այսպես և նրա պատմության մեջ տարբեր առիթներով հիշատակվում է և Արմենիան՝ Հայաստանը): Իսկ Խորենացին կենտրոնացած է հայոց պատմության ու ճակատագրի վրա, սկզբում հեռավոր էքսկուրսներ է անում հայոց մեծերի ծննդաբանությունը պարզելու համար, և հատուկ ուրախություն է ապրում, երբ հասնում է զուտ հայկական պատմության հանգրվանին (ինչպես վերը բերված հատվածում):

Հայ հերոսների մասին խոսելիս Խորենացին անթաքույց հիացող է, մանավանդ երբ հիշում է քաջ նախնիներին: Հիշենք, թե ինչպես է ներկայացնում Հայկին, նրա կռիվը Բելի դեմ, հետո՝ Տրդատին և մյուսներին:

Եվ այսպես, Խորենացու անկեղծ, խորը հայրենասիրությունը կասկած չի հարուցում: Կարելի է պնդել, որ *V* դարի ուրիշ ոչ մի հեղինակի գրքում հայրենասիրությունը այդքան խորությամբ գիտակցված չէ, ինչքան Խորենացու պատմության մեջ: Բայց այդ խորությունը նաև նշանակում է, որ նրա հայրենասիրությունը հայրենիքի պարզ գովերգություն չէ: Պա նաև տրամաբանն ու դառնությունն է իր ժողովրդի ոչ միայն ճակատագրի, այլև թերությունների և արատների համար: Հիշեմ Խորենացու գրքի հայտնի փաստերը և մի փաստ, որին գրեթե ուշադրություն չի դարձվել: Նախ, շատ հիշատակված փաստերը: Խորենացին, գնահատելու համար Սահակ Բագրատունու հանձնարարության արժեքը, նշում է, որ մեր հները հոգ չեն տարել հայոց պատմությունը շարագրելու մասին, մինչդեռ «թեև փոքր ածու ենք...» և այլն: Այստեղ արդեն խոր գծողություն կա նախնիներից: Խորենացու պատմությունն ավարտվում է հայոց թագավորության անկմամբ և Մաշտոցի ու Սահակի մահով: Այս առթիվ Խորենացին գրում է իր հուշակավոր Ողբը, որի մեջ հիշում է իր հայրենակիցների մեծամեծ թերությունները և արատները: Բայց նաև երկրորդ գիրքն է ավարտվում մի գլխով, որ իր բովանդակությամբ շատ է մոտենում Ողբին: Այս գլխի մասին է, որ գրեթե չի խոսվում: Ինչ էլ ասում Խորենացին այդ գլխում: Նախ՝ վերնագիրը. «Յաղագս վախճանի Տրդատայ թագավորի, ընդ որում եւ ողբերգական մեղադրութիւն»: Ինչու՞ «ողբերգական մեղադրութիւն»: Հիշելով Տրդատի լավ գործերը, որ «յետ հաւատոցն որ ի Քրիստոս», դրանից անմիջա-

պես հետո գրում է. «Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանավանդ թէ զանօրէնութիւն և զամբարշտութիւն ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի զսոցա գործս» (Գիրք երկրորդ, ՂԲ, էջ 246): Զայրույթը միանգամայն կոնկրետ առիթով է՝ Տրդատ թագավորին թունավորելը (այս առիթով Խորենացին հիշում է Սոկրատին թունավորելու, ինչպես նաև խաչված Քրիստոսին լեղախառն ըմպելիք տալու պատմութիւնները): Բայց դա առիթ է տալիս խոսելու ամբողջ ժողովրդի թերութիւնների մասին, նույն ոճով ու պաթոսով, ինչպես «Ողբում». «Արք Արամեանք, մինչև յե՛րբ էք ծանրասիրտք, ընդէ՛ր սիրեք զնանրութիւն և զանաստվածութիւն» (նույնը, էջ 247):

Այսպիսով, Խորենացու «Պատմութեան» մեջ հստակ երևում է մի գիծ, որը կարելի է անվանել խորապես քննադատական հայացք իր իսկ ժողովրդի հանդեպ, որի մասին նա այլ առիթներով խոսում է անկեղծ հիացմունքով և սիրով: Ուրեմն, այս գլուխը, «Ողբի» և մյուս հատվածների կողքին, մեզ հիմք է տալիս ասելու, որ հայրենասիրութեան այս որակը՝ հպարտութիւնը իր ժողովրդի լավ գործերի և պատմութեան համար և ցավն ու զայրույթը նրա թերութիւնների համար, բնորոշ է Խորենացուն:

Փափատոսի և Եղիշեի մատչաններում հայրենասիրութեան բնույթն այլ է: Փափատոսն առհասարակ հայրենիքի մասին չի խոսում: Պարզապես իբրև հայ մարդ հպարտութեամբ նշում է հայ թագավորների ու զորավարների հաղթանակները և առանց տատանվելու քննադատում նրանց, այսինքն՝ անհատների թերութիւնները: Նրա միտքը չի ձգտում ընդհանրացումների, դրա կարիքն էլ չունի: Նրա ուժը հետաքրքրական, հյուսիս, կենսական գրվագների մեջ է:

Եղիշեն գովերգում է հայոց պայքարը ընդդէմ պարսիկների հոգևոր բռնութեան. նրա շափանիշը մեկն է՝ ով հավատարիմ է Ղևոնդին, Վարդանին, հայոց եկեղեցուն՝ հերոս է ու սուրբ, ով հակառակ է դրանց կամ ձգտում է լեզու գտնել պարսիկների հետ՝ դավաճան է, ինչպես Վասակը: Նրա միտքը վերլուծական ուղղվածութիւն չունի, նրանք կրակոտ ոճն է ու հայրենասիրական պաթոսը: Նա միակողմանի է, ինչպես պահանջում է իր նպատակը՝ դաստիարակել սեր ու հավատարմութիւն հայրենիքի հանդեպ և արգահատանք դավաճանութեան հանդեպ:

Խորենացին այլ է, նա քննող է ու վերլուծող, և պաթոսը, թեև խորթ չէ նրան, երբ խոսում է, ասենք, Հայկի, Տրդատի և այլ հերոսների մասին, նրա բնորոշ գիծը չէ: Նրա միտքը ձգտում է ընդհանրացումների, նա ընդունակ է սերը և հիացմունքը համատեղել խիստ քննադատութեան հետ: Այսպիսի հայացք տրված է միայն մեծ և ուժեղ մարդկանց, որոնք ընդունակ են խորապես սիրելու: Մերժումը գալու է ահա այդպիսի հայրենասիրութիւնից:

Այսպիսի ուժգին ցավ հայրենիքի ճակատագրի համար կարող են ունենալ մեծ անհատները, որոնք հստակ տեսնում են նաև իրենց ժողովրդի թերութիւն-

ները: Նոր ժամանակներում այդպես էին սիրում հայրենիքը Հովհաննես Թումանյանը և Եղիշե Չարենցը:

Բայց կա ավելի էականը: Խորենացին առաջին հայ գրողն է ու մտածողը, որն իրեն զգում է ոչ թե պարզապես հայ, այլ հայ ժողովրդի, ազգային ամբողջության մասն ու ներկայացուցիչը, որը խորհում է ոչ թե թագավորների ու գորավարների ճակատագրի ու քաջագործությունների, ոչ թե կրոնների հերթափոխության, այլ իր ժողովրդի ու հայրենիքի մասին, և խոսելիս ու պատմելիս միշտ ելնում է ահա այդ ամբողջության գոյությունից, իր հերոսների գործերին նայում է հայ ժողովրդի տեսակետից:

Ահա այս տեսակետից Խորենացին (ինչպես և V դ. մյուս պատմիչները) զանազանվում է ոչ միայն հին հույն պատմիչներից, այլև ժամանակով իրեն ավելի մոտ պատմիչներից: Եվսերիոս Կեսարացին գրել է քրիստոնեական եկեղեցու պատմությունը բավական մանրամասն, և այդ պատմության մեջ հերոսների ազգային պատկանելությունը որևէ նշանակություն չունի: VI դ. պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին գրում է Հուստինիանոսի պատմությունը, բայց նա այնքան է տարված կայսեր ու նրա կնոջ արատների մերկացմամբ, որ հայրենիքի գաղափարը նրան որևէ չափով չի զբաղեցնում: Իսկ Խորենացու համար, այսօրվա տերմինով, հենց էթնիկական ազգության գաղափարը չափազանց կարևոր է:

Եվ ևս մի կարևոր խնդիր՝ Խորենացու՝ իբրև պատմողի կամ խոսողի անհատականության խնդիրը: Առհասարակ միջնադարյան գրականության մեջ անհատականության խնդիրը բավական բարդ է: Ուշ միջնադարում այն ընդհանրապես անցնում է երկրորդ պլան, տեքստը անանուն է: Բայց հինգերորդ դարի հայ պատմագրությունը այս տեսակետից էլ շատ հետաքրքրական պատկեր է ներկայացնում: Գոնե Խորենացու դեպքում մենք գործ ունենք պատմողի ընդգծված անհատականության հետ: Մեր այս պատմիչը ոչ միայն իրեն զգում է իբրև անհատականություն, այլև «իրավունքներ է բանեցնում»: Եվ դա տեսնվում է նրա մատյանի հենց առաջին էջից, որտեղ նա դիմում է իր պատվիրատու Սահակ Բագրատունուն: Այն, որ նա շատ գոհ է իշխանից, հասկանալի է: Բայց այդ գոհությունը հայտնելու եղանակը հուշում է գրողի տարիքի և իմաստության մասին: Մենք հասկանում ենք, որ սա սովորական շողքորթություն չէ իշխանից ինչ-որ շնորհներ ստանալու համար, նա խոսում է անկեղծ և սրտանց. «Առ որով տեսանեմ և զայս, զի եթե որք յառաջ քան զմեզ և կամ առ մեօք եղեն հարուստք և իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել զյիշատակս բանից, և ոչ արտաբուստ ուստեք այսոցիկ ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, և զքեզ այժմ այսպիսի եղեալ ծանեաք, - ապա ուրեմն յայտ է, թե ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, և

բարձրագույնիցն արժանաւոր գովութեանց, և յայսպիսի պատկանաւոր զնիլ յարձանագրութիւնս բանից» (Գիրք առաջին, Ա, էջ 6): Սա իսկապես ավագի, իրեն նահապետ զգացող մարդու խոսք է կրտսերին, դաս՝ բառիս լավագույն իմաստով: Խորենացին Սահակին համեմատում է հայ իշխանների հետ, որոնք ապրել են անցյալում և ապրում են իրենց կողքին: Եվ նրանցից ոչ մեկը հրաման չի արձակել գիտուններին պատմութիւն գրել: Մենք գիտենք, որ այս մտտիվը՝ քննադատական հայացքը նախնիների «անիմաստասեր բարբի» նկատմամբ հետո (1, Գ) ավելի ուժգին է հնչում Խորենացու խոսքերում, այսինքն՝ Սահակ Բագրատունու և մյուսների հակադրութեան մտտիվը պարզ հաճոյախոսութիւն չէ պատվիրատուին, այլ նրա արածի ճշգրիտ գնահատութիւն: Այս գնահատականի արժեքը ավելի ևս մեծանում է Խորենացու հայտնի խոսքերի ֆոնին, խոսքեր, որոնցով նա հանդիմանում է Սահակին պարսկական առասպելների հանդեպ անհարկի հետաքրքրութեան համար: «Այլ տացուք զայսոսիկ՝ մանկական քոյոց տիոց և անհասութեան խակութեանդ լեալ տարփանք» (Գիրք առաջին, Յաւելուած Բ, էջ 90): Միայն տարիքով զգալիորեն ավագը կարող էր այսպես խոսել իշխանի հետ՝ հիշելով նրա «մանկական» (երիտասարդ) տարիքը և «տհասութեան խակութիւնը»: Այս խոսքերը կարևոր են և Խորենացու տարիքը գիրքը գրելու պահին որոշելու համար: Բայց սրանք նաև «կերպարաստեղծ» արժեք ունեն: Խորենացու խոսքերի շնորհիվ մենք բավական լավ պատկերացում ենք կազմում իր իսկ՝ հեղինակի ինքնատիպ և վառ անհատականութեան մասին:

Այս նույն տեսանկյունից հետաքրքրական են Խորենացու դիմումները Սահակին գրքի տարբեր էջերում: Այդ բոլոր դիմումները շեշտում են Խորենացու անհատականութիւնը: Նա ոչ մի ցանկութիւն չունի թաքնվել զեպքերի, իրադարձութիւնների ետևում, ընթերցողը միշտ զգում է ավագի, նահապետի ներկայութիւնը նրա Պատմութեան մեջ: Երբեմն այնպիսի տպավորութիւն է, որ ավագը կրտսերին բանավոր պատմութիւն է պատմում, ինչպես եղել է ժողովրդական կենցաղում դարերով, և ըստ երևույթին, այդպես եղել է և հինգերորդ դարում: Օրինակ. «Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն Ափրիկանոսի ժամանակագրի...», կամ. «Եւ վկայ քեզ ի մօտոյ երաշխատորեսցէ Եկէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացոյ...» (Գիրք երկրորդ, Ժ, էջ 120): Այսինքն, այստեղ մենք ունենք Խորենացու պատմմի առանձնահատկութիւններից մեկը՝ գիտական-քննական վերաբերմունքը և ոճը ներդաշնակորեն զուգակցվում են կենդանի գրույցի՝ ժողովրդական խոսքից եկած գծերի հետ՝ ընդգծելով պատմողի անհատականութիւնը:

Մանուկ Աբեղյանը, խոսելով Խորենացու և Սահակ Բագրատունու հարաբերութիւնների մասին, շատ զիպուկ նկատողութիւն է արել Խորենացու անհատականութեան մասին. «Մեր այս պատմիչը այնպիսի գրողներից է, որ ամեն մի հարմար ըոպէի հայտնում է իր կարծիքները: Ուստի և մենք նրա Հայոց

Պատմությունից լավ ճանաչում ենք նրա բնավորության շատ կողմերը, և մեր ոչ մի պատմագրի հայացքի, համոզումների ու գրական ճաշակի մասին այնքան ստույգ ծանոթություն չունենք, որքան Մ. Խորենացու»⁶:

Ես չեմ խոսում Խորենացու ժամանակի մասին: Դա իմ թեման չէ, մանավանդ, այդ խնդրին նվիրված են բազում գրքեր ու հոդվածներ XVIII դարից մինչև այսօր: Բայց ներկա հոդվածի թեման ստիպում է առնվազն մի դիտողություն անել՝ կապված Խորենացու խոսքի առանձնահատկությունների հետ: Այն պատմաբաններն ու բանասերները, որոնք տարված են Խորենացու գրքի սխալներն ու «կեղծիքը» մերկացնելով, միշտ աչքաթող են անում կամ, ավելի լավ է ասել, չեն տեսնում այս գրքի ամբողջությունը, ռճական միասնությունը, ինչի մասին ես խոսեցի: Եվ ահա այն առանձնահատկությունները, որոնք, հուսով եմ, միայն ես չեմ նկատել, մի բան են վկայում. այս գրքի հեղինակը մեկն է, որն անկեղծ է իր մտքերով ու մտեցումներով: Այսինքն, նա չէր կարող ամբողջ մեծ գրքի էջերում, ամեն քայլափոխի, մտածել V դարի մարդ ներկայանալու մասին: Նա միայն կարող էր լինել: Փաստարկ, որ կարող է շատ թույլ թվալ բանասիրական և պատմական քննությունների արդյունքների կողքին. բայց, ըստ էության, դա ամենագլխավոր փաստարկներից մեկն է, երբ խոսում ենք գրողի ու նրա ստեղծագործության մասին:

Խորենացու նորօրյա քննադատների մեջ վերջին տասնամյակներում առանձնանում է պրոֆեսոր Ռոբերտ Թոմսոնը, մի մարդ, որն իսկապես մեծ ծառայություններ ունի հայ միջնադարյան գրականության երկերը անգլերեն թարգմանելու գործում: Բայց Թոմսոնը այն հայագետների թվում է, որոնք Խորենացու գիրքը համարում են IX դարի գործ, հետևաբար՝ կեղծիք: Հայ և այլազգի պատմաբաններից ու բանասերներից շատերն են գրել այս խնդրի մասին. հիշեմ հայագիտության դասականներից Մանուկ Աբեղյանի և Ստեփանոս Մալխասյանցի, նրանց հետևորդների՝ Գաղիկ Սարգսյանի, Բաբկեն Հարությունյանի, Ալբերտ Մուշեղյանի աշխատությունները, որոնցում նրանք բանասիրական և պատմագիտական քննությամբ հաստատում են Խորենացու V դարի հեղինակ լինելը: Թոմսոնի ներածական հոդվածը Խորենացու գրքի իր իսկ թարգմանությունը ինձ հետաքրքրական է իմ թեմայի տեսակետից՝ ինչպե՞ս է պրոֆ. Թոմսոնը ընկալում Խորենացու խոսքի առանձնահատկությունները: Պատասխանը տարօրինակ կարող է թվալ, բայց իսկապես Թոմսոնը բացարձակապես անուշազիր է գրանց: Առհասարակ նրա հոդվածը ավելի քրեական մեղադրանքի փաստաթուղթ է հիշեցնում, քան գիտական անաչառ վերլուծություն: Նա իրապես ոչ թե գիտական ճշմարտությունն է փնտրում, այլ Խորենացու «մեղավորության» ապացույցներ, և այդ ճանապարհին բոլորովին մոռանում

⁶ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Անթ., Լիբանան, էջ 269:

է, որ Խորենացին գրող է, իսկ գրողի կեղծ ու անկեղծ լինելը նաև (և գուցե առաջին հերթին) նրա խոսքի բնույթի մեջ է երևում:

Վերևում ես խոսեցի Խորենացու հայրենասիրության մասին, իր ազգի ներկայացուցչի նրա արժանապատվության և նույն պահին իր ժողովրդի հանդեպ նրա ամենախիստ քննադատության մասին: Պրոֆ. Թոմսոնը Խորենացու այս վերաբերմունքը «մաքրում» է հակասություններից, Խորենացուն ներկայացնելով իբրև մեկին, որն ամեն զնով ուզում է փառաբանել իր ժողովրդին ու նրա ներկայացուցիչներին: Բերեմ երկու օրինակ նրա ներածական հոդվածի 27 էջից: Առաջինը. «Այս միատիֆիկացիաների լույսի ներքո զարմանալի չէ, որ Մովսեսը հաճախակի օգտագործում է Հովսեպոսին առանց դա գիտակցելու: Առաջին հերթին մենք պետք է նկատենք ազապտացիաների մի քանի օրինակներ, որոնք արված են գրական էֆեկտի համար, և ապա ավելի հետաքրքրական օրինակներ, որոնց նպատակն է Հայաստանը կեղծիքով մտցնել համաշխարհային թատերաբեմ»⁷: Երկրորդը. «Այստեղ Մովսեսը երկու գլխավոր նպատակ ունի՝ բարձրացնել Հայաստանի թագավորներ Տիգրանի և Արտավազդի միջազգային նշանակությունը Հռոմի և Պարթևների պատերազմներում և ներկայացնել հրեական համայնքները Հայաստանում և Բագրատունիների ընտանիքի հրեական ծագումը...»⁸: Ուշագրություն դարձրեք իմ կողմից ընդգծված բառերին: Պրոֆ. Թոմսոնը այնպես է ներկայացնում իր հերթական մեղադրանքը, որ Խորենացու հայրենասիրությունը վերածվում է մանր խորամանկության: Մյուս կողմից, իր հոդվածում նա ոչ մի անգամ, գոնե հարևանցի չի հիշատակում Խորենացու ասածները «փոքր ածու» լինելու մասին, նրա Ողբը գրքի վերջում և զայրույթը իր հայրենակիցների հասցեին, որոնք ես արդեն հիշատակել եմ: Այսինքն, եթե Մովսես Խորենացին պատրաստ էր անգամ կեղծիքների գնալ Հայաստանը և նրա թագավորներին բարձրացնելու համար, էլ ինչու՞ նա պետք է այդքան խիստ խոսեր իր հայրենակիցների թերությունների մասին, գրեր այդքան ազդեցիկ իր ողբը: Զարմանալի է, որ խոսքի հետ գործ ունեցող փորձված մասնագետը այդքան անուշադիր է գրողի խոսքի կարևորագույն առանձնահատկությունների հանդեպ: Այս ձևով պրոֆ. Թոմսոնը Խորենացու միանգամայն սթափ և անկեղծ հայրենասիրությունը վերածում է մակերեսային պարզ խորամանկության (երևի պատահական չէ, որ նա բոլորովին չի անդրադարձել Մ. Աբեղյանի և Ստ. Մալխասյանցի գիտողություններին):

⁷ Moses Khorenats' I, *History of the Armenians*, Translation and Commentary on Literary Sources by Robert W. Thomson, Ann Arbor: Caravan Books, 2006, p. 26.

⁸ Անդ:

Մովսես Խորենացու «Պատմության» գրական առանձնահատկությունները պահանջում են խոր և համակողմանի քննություն: Դա անհրաժեշտ է ոչ միայն հայոց գրականության և խոսքի, այլև հայկական մտավոր մշակույթի ամբողջական պատմության ստեղծման համար:

Azat Eghiazaryan
Literary Peculiarities of “History of the Armenians” by Movses Khorenatsi

The “History of the Armenians” by Movses Khorenatsi is one of the most important monuments of Armenian historiography. Yet its literary peculiarities are not studied sufficiently. I am based on the conviction that it is not a fiction, but not a scientific work either. It has its specific features, which I try to find out in my paper. The most essential characteristic is the style of his narrative, which I have focused on.